«ՍՈՍԵ ՄԱՅՐԻԿ»-ի նվիրյալ զավակը

Հայկ Հարությունյան

Ծնվել է 1962թ. օգոստոսի 17-ին՝ Էջմիածնի շրջանի Նորակերտ գյուղում: Ավարտել է տեղի դպրոցը: Մանկուց սիրել է պատմություն և աշխարհագրություն առարկաները:
Չարաճճի երեխա է եղել Հայկը: Սիրել է քանդելն ու թափելը, իսկ պարսատիկը եղել է նրա գրպանի անբաժանելի ընկերը: «Սառը զենքով» է շրջել բակում...

Սասունցու և Մշեցու «խառնուրդ» է . գժերից - գիժ: Ինչպես յուրաքանչյուր հայ, Հայկ Հարությունյանն էլ ապրեց ժամանակի պահանջներով: Դարձավ արցախյան շարժման ակտիվ մասնակից: Ինքնապաշտպանական մարտերի և արցախյան ազգային-ազատագրական պայքարի մարտիկ:

1989թ. ապրիլի 25-ից նա մասնակցել է՝ Երասխավանի, Նոյեմբերյանի, Ոսկեպարի, Գորիսի շրջանի Կոռնիձորի սահմանների ինքնապաշտպանական մարտերին: Հրամանատար է օծվել ՀԱԲ-ում՝ 1989թ. նոյեմբեր ամսին, ստեղծելով «Սոսե մայրիկ»-ի անվան ջոկատը:
Գլխավոր հրամանատար՝ Ռ. Վասիլյանի հրամանով ջոկատն ուղարկվում է Տավուշի մարզ, զբաղվելու Այգեձորի պաշտպանությամբ, իսկ 1990թ. ջոկատը մասնակցում է Ոսկեպարի մարտերին:
ՀԱԲ-ի օգոստոսյան դեպքերից հետո մարտական ուղին սառեցվեց.
Սակայն...

- **Մենք ո՛չ իշխանությունների համար ենք պայքարում, ո՛չ էլ ՀՀՇ-ի: Մեր երկրի ապագան է վտանգված, պետք է ոտքի կանգնենք,- իր խրոխտ ձայնով ահազանգեց Ռազմիկ Վասիլյանը.և...**
- **Տղե՛րք, Արաբը եկավ...**

Դա 1992թվականն էր: Հայկ Հարությունյանը կրկին ոտքի էր. ի՛ր ընկերների հետ, ի՛ր ջոկատով: ԵՎ Արաբի ջոկատի մարտական ուղին Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղից ձգվեց մինչև Շուշի, ապա...մինչև Մարտակերտի շրջան և ավարտվեց 1994թ. դեկտեմբերի 12-ին:

- Ես կրկին ծառայեցի, այս անգամ Ազգային Բանակի զորամասերից մեկում, որպես գնդի հրամանատարի տեղակալ, մինչև 1996թվականը:

Այսօր, արժանի հայորդին իր բարեգործական ծառայությունը շարունակում է «Ազատամարտիկ» ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպությունում, լինելով կազմակերպության նախագահը: